

Եղիպտոսի մէջ եթէ Սատաթի վերադարձը եղաւ խանդավառ ցոյցերու մէջ, սակայն քանի մը օր յետոյ, երբ Պեկին Գաճիրէ կ'այցելէր, հանդիպեցաւ ժողովրդային շատ պաղ ընդունելութեան: Դիմաւորելու համար օդակայան չէր մեկնած Սատաթ, ինչպէս նաև իր վարչապետը, Մուսթաֆա Սալիլ, որպէս բողոք Պեկինի քանի մը օր առաջ ըրած յայտարարութեան Իսրայէլեան Խորհրդարանին առջև, թէ՛ երբե՛ք վերադարձ դէպի 1967ի սահմանները, երբե՛ք վերադարձ Արաբներուն պատմական Սամարիան եւ Յուդայի երկիրը (Կաղան եւ Այսրյորդանանը) եւ երբե՛ք Պաղեստինեան պետութիւն մը իր սահմաններուն մօտ:

Պեկինի արտասանած այս խօսքերը դաշնագիրը ստորագրելէ յետոյ բուն վրդովմունք յառաջ բերած էր ժողովրդային խառնուրուն մէջ. խօսուեցաւ նոյնիսկ վարչապետ Մուսթաֆա Սալիլի հրաժարման մասին:

Այս արամադրութիւնը նկատի առնելով է, որ Գաճիրէի օդակայանին մէջ Պեկինի ժամանումէն քանի մը վայրկեան միայն առաջ երեւցած են իսրայէլեան դրօշակներ, որոնք ժամանումէն տասը վայրկեան յետոյ վար առնուած են:

Դառնութեամբ է որ ընդունեց Եղիպտոսի ժողովուրդը Պաղտատի մէջ աւանուած Արաբ արաբքին դործոց նախարարներուն ժողովին որոշումները, որոնց համաձայն Արաբ երկիրները պիտի դադրեցնեն իրենց նիւթական օժանդակութիւնը եւ բարոյական աջակցութիւնը. ետ պիտի կանչեն իրենց դիւանագիտական ներկայացուցիչները եւ տնտեսապէս պաշարումի ենթարկելով բոլորովին պիտի չէզոքացնեն Արաբական աշխարհի նախկին դեկավար Իսլամ երկիրը: Արդէն իսկ Սատաթի Երուսաղէմ այցելութենէն ի վեր Եղիպտոս իր դիրքը կորսնցուցած էր Իսլամ աշխարհի աչքին: Իրանի Իսլամական շարժման յաղթանակը Գաճիրէի մէջ լայն արձագանք դրած ըլլալով սկսած է արդէն իսկ սպառնալի դառնալ:

Այս բոլոր պայմանները մէկ յայտարարի բերելով միջադպային քաղաքական դէտերը կասկածելի կը նկատեն դաշնադրին կիրառումը, եթէ զրայցայունց նոր դէպքեր տեղի չունենան Իսրայէլի կամ Եղիպտոսի մէջ:

Ա. Պ.

**Հ. Մ. Մ. ՔԱԼԻՖՈՐՆԻԱ**

**ՓԱՍՏՏԻՆԱՅԻ Հ. Մ. Մ.Ի ՏԻԿՆԱՆՑ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԶԱՏԿՈՒԱՅ ԶԱՇԿԵՐՈՅԹԸ**

Փաստաինայի նորակադմ Հ.Մ.Մ.ի Տիկնանց Վարչութիւնը, նոր աւանդութեան մը հիմը դրաւ Զատիւան տօնին առթիւ ճաշկերոյթ մը տալով իր անդամներուն եւ համակիրներուն համար:

Արդարեւ, Շաբաթ Ապրիլի 14ին, խուներամ բազմութիւն մը լեցուցած էր Հ. Մ. Մ.ի փաստաինայի ակումբը: Բոլորն ալ ուրախ էին, քանի որ իրարու ծանօթ ընտանիքներ եւ ընկերներ միատեղ պիտի տօնէին խմբումը:

Տիկնանց Վարչութեան անունով օրուան հանդիսավար ընկ. Գ. Մուրյանն ողջունեց ներկաները եւ շնորհաւորելով բոլորի Զատիկը իր ուրախութիւնը յայտնեց որ առաջին անգամ ըլլալով, այս յարկէն ներս կը մէկտեղուինք նման տօնախմբութեան մը առթիւ: Այնուհետեւ խնդրեց բոլոր «Յարութիւն»ներէն որպէսզի ոտքի ելլեն եւ՝ շնորհաւորեց անոնց անուանակոչութեան տարեդարձը:

Ճաշէն ետք՝ տեղի ունեցաւ հայկական աւանդական հաւիթախաղը, որ՝ ներկաներէն ոմանց համար նորութիւն մըն էր:

Տեղի ունեցան հայկական եւ եւրոպական պարեր, վիճակահանութիւն եւ սրտաբուխ նուիրատուութիւններ:

Խանդավառ մթնոլորտը շարունակուեցաւ մինչեւ ուշ գիշեր եւ ներկաները բաժնուեցան սրահէն հայկական ուշախ դատիկ մը տօնած ըլլալու դո՛ւնակութեամբ եւ միաժամանակ՝ շնորհաւորելով Տիկնանց Վարչութիւնը իրենց այս յաջող ձեռնարկին համար:

**ՓԱՍՏՏԻՆԱՅԻ Հ. Մ. Մ.Ի ՄՐՑՈՒՄՆԵՐԸ**

● Կիրակի, Ապրիլի 7-ին, Փաստաինայի Հ. Մ. Մ.ի Փուտպոլի խումբը՝ բարեկամական մրցում մը ունեցաւ Ալթատենայի Գաղաքապետարանի դաշտին վրայ, տեղւոյն էյ. Ուայ. էյ. Սի. Օ. խումբին դէմ: Մինչեւ կիսախաղ Հ. Մ. Մ. յաղթական էր (1-0): Կիսախաղէն ետք հակառակորդ խումբը կոլ մը արձանադրելով խաղն աւարտեցաւ հաւասար արդիւնքով (1-1):

● Կիրակի, Ապրիլի 14ին Հ. Մ. Մ. մըրցեցաւ Մոնթեպելլոյի հայկական «Արարատ» Փուտպոլի խումբին դէմ, Մոնթեպելլոյի Հայ Սքուլի դաշտին վրայ: Մրցումն աւարտեցաւ 2-1 արդիւնքով ի նպաստ «Արարատ»ի:

ԷԶՄԻԱԾՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԱՄԱԿԸ

Ծնթ. Խ.

Մեր Ապրիլի համարով հրատարակած էինք Թորոնթոյի մէջ երկրորդ եկեղեցական համայնքի մը կազմութեան եւ Գանատայի թեմը Հիւսիսային Ամերիկայի Հայոց Արեւելեան թեմէն անչառ եւ անկախ թեմ դարձնելու կապակցութեամբ գրուած թղթակցութիւն մը, որ մեզի վրելուած էր Թորոնթոյի մեր սեփական թղթակիցէն:

Այս հարցով սակոյծուած թեմական անսխառտելի տագնապին շուտափոյթ լուծում մը տարու համար վաղըէն Ա. Վեհափառ Հայրապետը էջմիածին հրաւիրած էր Թորոնթոյի նորակազմ Ս. Խաչ եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Գերշ. Արիս եպիսկոպոս Շիրվանեանը:

Պատեհ աւիթէն օդուուելով, նորակազմ Ս. Խաչ եկեղեցւոյ հոգաբարձութեան երեք ներկայացուցիչներ՝ Տոբթ. Վ. Այնէճեան, Պրն. Արմէն Բիւրքճեան եւ Պրն. Պետրոս Մուշեան, ընկերանալով Գերշ. Արիս Սրբազանին Մարտ 26ին մեկնած էին էջմիածին, Վեհափառ Հայրապետին անձամբ ներկայացընելու իրենց առաջադրանքները:

Պատուիրակութիւնը, երկու շաբաթ էջմիածին մնալէ ետք, վերադարձած է Թորոնթո, Վեհափառ Հայրապետին խոստանալով լի ու լի համակերպիլ էջմիածնի Գերազոյն Հոգեւոր խորհուրդի որոշումներուն:

Մեր ներկայ թիւով, ամբողջութեամբ կը հրատարակենք էջմիածնի Գերազոյն Հոգեւոր Խորհուրդի այս հարցի կապակցութեամբ առած որոշումները, որոնք պաշտօնական նամակով մը յանձնուած են Թորոնթոյի Ս. Խաչ եկեղեցւոյ պատուիրակութեան: Նամակը ըստօրադրուած է Գերազոյն Հոգեւոր Խորհուրդի ատենապետ Գերշ. Սիւն Արքայ. Մանուկեանի կողմէ:

Յանուն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, այսու մեր ուրախութիւնն ենք յայտնում որ Ս. էջմիածին ուխտի գալով Ձեր որդիական սէրն ու յարգանքը ներկայացուցիք Ն. Սրբութեանը եւ Ձեր մտածումներն ու առաջարկները մատուցեցիք Գերագոյն Հոգեւոր Խորհուրդին՝ քանատահայ եկեղեցական մի շարք հարցերի վերաբերեալ:

Մենք գոհունակութեամբ կ'ողջունենք Ձեր ժամանումը, լսեցիմք եւ գնահատեցիմք Ձեր եռանդուն գործունէութիւնը՝ յատկապէս

կրթական տեսակետով, որովհետեւ ամէն հայ վարժարան փրկութեան մի լաստ է նոր սերունդների հայապահպանման աշխատանքներին:

Այսու հաստատում ենք նաեւ Ձեր Մարտ 30, 1979 յուշագիրը, որը քննարկուեց Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի Մարտ 31ի նիստին նախագահութեամբ Վեհափառ Հայրապետին:

Ձեր գրութեան հիմնական յառաջադրանքներն են.

- 1.- Գանատայի Շրջանի Անկախ Թեմի հոչակումը եւ կազմակերպումը:
- 2.- Ս. Խաչ Հայ վարժարանի գոյատեւումն ու զարգացումը:
- 3.- Թորոնթոյի մէջ երկրորդ եկեղեցական համայնքի մը կազմակերպումը եւ հաստատումը:

Այսու գոհունակութեամբ հաւատարկացնում ենք Ձեզ թէ այս երեք յառաջադրանքները այժմ արդէն իրականացման գործնական նախապարհի վրայ են գտնուում: Այս նպատակով, Վեհափառ Հայրապետը անհրաժեշտ միջոցառումների է դիմել եւ համապատասխան ցուցումներ է հաղորդել ԱՄՆ-ի հայոց Արեւելեան թեմական իշխանութեանց որու իրաւասութեան ներքեւ կը գտնուի նաեւ Գանատայի շրջանը: Ձեզի կը վստահեցնենք թէ յառաջիկայ շուրջ վեց ամիսներու ընթացքին, այդ երեք հարցերն ալ իրենց բաղադրի լուծումը պիտի գտնեն օրինաւորութեամբ, ընդհանուր համերաշխութեամբ եւ մեր եկեղեցւոյ եւ Մայր Աթոռի հաւատարիմ բոլոր շրջանակների եւ հաւատացեալների շինարար գործակցութեամբ:

Վեհափառ Հայրապետի կողմէ հաստատուած մեր նախատեսած գիծերն են. -

Ա.- Թեմիդ Սրբազան Առաջնորդը եւ թեմական խորհուրդը պատրաստէ Գանատայի ապագայ անկախ թեմի կանոնադրութեան նախագիծը ու ուղարկէ Մայր Աթոռ առ ի վաւերացում, որմէ ետք, Հայրապետական կոնդակով պիտի հոչակուի Գանատան որպէս անկախ թեմ: Այս համաձայն այդ կանոնագրի տրամադրութեան տեղի պիտի ունենայ պատգամաւորների ընտրութիւն՝ Գանատայի բոլոր եկեղեցական համայնքների եւ ընտրուած պատգամաւորները պիտի գումարեն Գանատայի նոր թեմի առաջին թեմական պատ-